

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒԼԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Աշվածներից ո՞ր աշխարհագրական մշակույթի բաղադրիչ չէ:

- 1) աշխարհագրության լեզուն
- 2) աշխարհի աշխարհագրական պատկերը
- 3) աշխարհագրական մտածողությունը
- 4) պատմական հետազոտության մեթոդները

2

Քանի՞ փուլ ունի դաշտային հետազոտության մեթոդը.

- 1) 5
- 2) 2
- 3) 3
- 4) 4

3

Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270°:

- 1) արևմտյան
- 2) հարավային
- 3) արևելյան
- 4) հյուսիսային

4

Միջին լայնությունները քարտեզի վրա պատկերելու համար առավել հաճախ ո՞ր պրոյեկցիան են կիրառում:

- 1) կոնային
- 2) հասարակածային
- 3) ազիմուտային
- 4) գլանային

5

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացնում են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը՝ սկսվել կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) խորքային գրավիտացիոն
- 2) միգամածային
- 3) երկնաքարային
- 4) պատահարային

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Դելիի գոտիական ժամանակն առաջ է Երևանի գոտիական ժամանակից:
- 2) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:
- 3) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:
- 4) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:

7


Նկար 1-ում n՞ր տառով է նշված հրաբխի մղանցքը:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



8

Նկար 2-ում n՞ր հարթավայրն է նշված Դ տառով:




- 1) դաշտավայր
- 2) սարահարթ
- 3) բարձրավայր
- 4) ցածրավայր

9

Ո՞ր քամիներն են պատկերված նկար 3-ում:

- 1) լեռնահովտային քամիներ
- 2) բրիզներ
- 3) մուսսոններ
- 4) պասսատներ




նկար 3

10

Նկար 4-ում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3



Նկար 4

11

Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Լուսնի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի իջեցումը կոչվում է տեղատվություն:
- 2) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:
- 3) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:
- 4) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:

12

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2500 մ է, գետաբերանինը՝ 1600 մ, երկարությունը՝ 150 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 8 մ/կմ
- 2) 12 մ/կմ
- 3) 6 մ/կմ
- 4) 15 մ/կմ

13

Մթնոլորտի ո՞ր շերտն է ֆիլտրում ուլտրամանուշակագույն ճառագայթների մեծ մասը.

- 1) ջերմոլորտը
- 2) ներքնոլորտը
- 3) վերնոլորտը
- 4) օզոնի շերտը

14


Նշվածներից որի՞ միավորն է արտահայտվում տոկոսներով.

- 1) բացարձակ խոնավություն
- 2) մթնոլորտային ճնշում
- 3) հարաբերական խոնավություն
- 4) օդի ջերմաստիճան

15

Նկար 5-ում ո՞ր թվով է պատկերված հասարակածային խոնավ անտառների զոնան:

- 1) Դ
- 2) Ա
- 3) Բ
- 4) Գ



նկար 5

16

Տայգայի բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում:

- 1) դարչնագույն
- 2) լատերիտային
- 3) կարմրագորշ
- 4) պոդզոլային

17 Քարտեզ 1-ում Բ տառով նշված կետի անունը նշված է:

- 1) Թորրենս
- 2) Մալակկայի
- 3) Բերինգի
- 4) Ջիբլարթարի

18 Քարտեզ 1-ում Ա տառով նշված կետի անունը նշված է:

- 1) Մումբայ
- 2) Չենայ
- 3) Սինգապուր
- 4) Ադեն



Քարտեզ 1

19

Աֆրիկայի վերաբերյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 2) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
- 3) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:
- 4) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման չորս մարզ՝ երկու քարձր, երկու ցածր:

20

Ո՞ր գետն է երկու անգամ հատում հասարակածը:

- 1) Նիգեր
- 2) Օրանժ
- 3) Կոնգո
- 4) Նեդոս

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Ամերիկայում ամենամեծ տարածում ունի անապատների և կիսաանապատների զոնան:
- 2) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 3) Հյուսիսային Ամերիկան Գրենլանդիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 4) Հյուսիսային Ամերիկայում Միսսուրի գետը հորդանում է ձմռանը:

22

Հյուսիսային Ամերիկայում չեն ապրում.

- 1) որմզդեղն ու բիզոնը
- 2) լաման ու նանդու ջայլամը
- 3) կարիբուն ու խոյացույրը
- 4) սպիտակ արջն ու լեմինգը

23

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Լա Պլատայի դաշտավայրը շատ հարուստ է ոսկու պաշարներով:
- 2) Անդերը հարուստ է հատկապես պղնձի պաշարներով:
- 3) Բրազիլական և Գվիանական սարահարթերի հնագույն հիմքի բյուրեղային ապարները հարուստ են երկաթի և մանգանի պաշարներով:
- 4) Կարիբյան ծովի ափերին և Անդերի հյուսիսային մասերի միջլեռնային ձկվածքներում կան նավթի հարուստ պաշարներ:

24

Ո՞ր գետը Հարավային Ամերիկայում չէ:

- 1) Օրինոկո
- 2) Ամազոն
- 3) Յանցզի
- 4) Պարանա

25

Ո՞ր ծովը Ավստրալիայի ափերը չի ողողում:

- 1) Արաֆուրյան
- 2) Բոֆորտի
- 3) Կորալյան
- 4) Թասմանի

26

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Անտարկտիդան Հրո երկիր կղզեխմբից բաժանվում է Դրեյկի լայն ու փոթորկոտ նեղուցով:
- 2) Անտարկտիկան մայրցամաք է, իսկ Անտարկտիդան՝ աշխարհամաս:
- 3) Անտարկտիդային ամենամոտ մայրցամաքը Հարավային Ամերիկան է:
- 4) Ատարկտիդան ամբողջությամբ ընկած է հարավային բևեռային շրջագծի և Հարավային բևեռի միջև:

27

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունն չէ:

- 1) ԽՍՀՄ-ի փլուզումը
- 2) ՆԱՏՕ-ի և ՎՊԵ-ի ստեղծումը
- 3) ԽՍՀՄ-ի կազմավորումը
- 4) ԱՄՆ-ի կազմավորումը

28

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Աշխարհագրական (աստղագիտական) սահմանը կարող է համընկնել այս կամ այն միջօրեականի կամ զուգահեռականի հետ:
- 2) Սահմանարկումը տեղանքում պետական սահմանի անցկացումն է, նրա աշխարհագրական կոորդինատների որոշումը, սահմանանշանների միջոցով սահմանագծի անցկացումը:
- 3) Լեռնագրական սահմանները գլխավորապես անցնում են բնական սահմաններով, հիմնականում՝ լեռնաշղթաներով ու գետերի հունով:
- 4) Երկրաչափական սահմանն ուղիղ գիծ է, որը միացնում է պետական սահմանի որոշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները:

29

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Աշխարհի երկրների ճնշող մեծամասնության վարչատարածքային կառուցվածքը դաշնային է:
- 2) Միապետություններում երկրի օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեությունը ղեկավարում է նախագահը:
- 3) Միասնական պետության վարչատարածքային միավորներն ունեն որոշակի քաղաքական ինքնավարություն:
- 4) Խորհրդարանական հանրապետությունում երկրի նախագահն ընտրվում է ոչ թե անմիջապես ժողովրդի, այլ խորհրդարանի կողմից:

30

Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ դրանց տարածքի մակերեսի աճման հաջորդականության.

- 1) Կանադա, Չինաստան, ԱՄՆ, Բրազիլիա
- 2) Բրազիլիա, Ավստրալիա, Սուդան, Ղազախստան
- 3) ԱՄՆ, Չինաստան, Կանադա, Ռուսաստան
- 4) Ավստրալիա, Հնդկաստան, Բրազիլիա, Կանադա

31

Ո՞ր երկիրն ունի 100 մլն-ից պակաս բնակիչ

- 1) Ճապոնիա
- 2) Պակիստան
- 3) Ֆրանսիա
- 4) Հնդկաստան

32

Բնակչության շարժի հետևանքով ներգաղթողների ու արտագաղթողների տարբերությունը կոչվում է.

- 1) բնակչության մեխանիկական շարժ
- 2) բնակչության կազմ
- 3) բնակչության բնական աճ
- 4) բնակչության վերարադրություն

33

Կյանքի միջին տևողությունը առավելապես պայմանավորված չէ.

- 1) բարձր մահացությամբ
- 2) բնակչության ցածր կենսամակարդակով
- 3) բուժսպասարկման մակարդակով
- 4) ուրբանիզացիայի մակարդակով

34

Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ է.

- 1) գերմանականը
- 2) չինականը
- 3) թուրքականը
- 4) սեմականը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 2) Աէկ-ներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 3) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:
- 4) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:

36

Նյութական արտադրության ո՞ր ճյուղն է առավել նյութատար ու տեղաբաշված է հանքի մոտ:

- 1) մեքենաշինություն
- 2) վառելիքի արդյունահանում
- 3) էլեկտրաէներգետիկա
- 4) սննդի արդյունաբերություն

37

«Հանքավայր-հանքատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Սամոտլոր-նավթ
- 2) Սուրգուտ-ածուխ
- 3) Մագադան-գազ
- 4) Նորիլսկ-երկաթ

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|--------------|--------------|
| 1. Ուկրաինա | ա. Զագրեբ |
| 2. Բուլղարիա | բ. Սոֆիա |
| 3. Խորվաթիա | գ. Բուխարեստ |
| 4. Ռումինիա | դ. Կիև |

- 1) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 3) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
- 4) 1-դ, 2-բ, 3-ա, 4- գ

39

Վենտրոնական Ասիայի տրված պետություններից ո՞րն ունի ելք դեպի Կասպից ծով:

- 1) Ղրղզստան
- 2) Ուզբեկստան
- 3) Տաջիկստան
- 4) Ղազախստան

40

«Մշակարույս-մշակող առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը:

- 1) կակաո-Ալժիր
- 2) գետնանուշ-Թունիս
- 3) մանիոկ-Նիգերիա
- 4) սուրճ-Մարոկկո

41

Ո՞ր կղզեխումբն է գտնվում Օվկիանիայում:

- 1) Կուրիլյան
- 2) Ֆիլիպիններ
- 3) Միկրոնեզիա
- 4) Ճապոնական

42

ԱՄՆ-ի ո՞ր քաղաքն է գտնվում Խաղաղ օվկիանոսի ափին:

- 1) Հյուսթոն
- 2) Լոս Անջելես
- 3) Դեթրոյթ
- 4) Նյու Յորք

43

Լատինական Ամերիկայում խոշոր եղջերավոր անասնապահության զարգացմամբ ո՞ր երկիրն է առաջատար:

- 1) Վենեսուելա
- 2) Պարագվայ
- 3) Արգենտինա
- 4) Ուրուգվայ

47

ՀՀ Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենափոքր քաղաքը Տաշիրն է:
- 2) Բնակչության թվաքանակով զիջում է միայն Սյունիքի մարզին:
- 3) Քաղաքների թվով հանրապետությունում առաջինն է՝ ութ քաղաք:
- 4) Ամենացածրադիր քաղաքը Վանաձորն է:

48

Ո՞ր քաղաքներն են գտնվում Սյունիքի մարզում:

- 1) Միսիան և Գորիս
- 2) Մարտունի և Վարդենիս
- 3) Սևան և Գավառ
- 4) Գյումրի և Վանաձոր

49

Գեղարքունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողածածկույթում տիրապետում են լեռնային սևահողերը:
- 2) Հողածածկույթում շատ են կիսաանապատային գորշ հողերը:
- 3) Հարավում տարածվում են աղուտներ:
- 4) Հողաբուսական ծածկույթը չի ենթարկվում վերընթաց գոտիականության:

50

Նշվածներից ո՞ր լեռնագագաթն է ամենաբարձրը Արցախի լեռնաշղթայում:

- 1) Մեծ Քիրս
- 2) Գոմշասար
- 3) Մայմեխ
- 4) Քաշաթաղ

51

Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.

- 1) կենսաբանական ռեսուրսներ
- 2) հողային ռեսուրսներ
- 3) ռեկրեացիոն ռեսուրսներ
- 4) հանքային ռեսուրսներ

52

Երկրի նավթի հետախուզված պաշարները կազմում են մոտ 24 մլն մ³, իսկ բնակչության թիվը՝ 3 մլն մարդ: Որքա՞ն կկազմի ռեսուրսաապահովվածությունը 1 բնակչի հաշվով:

- 1) 8 մ³/մարդ
- 2) 5 մ³/մարդ
- 3) 6 մ³/մարդ
- 4) 7 մ³/մարդ

53

Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.

- 1) այլումինաձուլությունը
- 2) կարի արտադրությունը
- 3) սարքաշինությունը
- 4) կոնյակի արտադրությունը

54

Կենդանիների պահպանության միջոցառում է.

- 1) առաջավոր ագրոտեխնիկայի կիրառումը
- 2) արոտաշրջանառությունը
- 3) ճահիճների և ճահճակալած հողերի չորացումը
- 4) կլիմայավարժեցումը

55

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 2) Ջերմոցային էֆեկտը պայմանավորված է մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 3) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 4) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառը Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:

56

Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Նշել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Մեծ աղի | 5) Արալյան |
| 2) Կասպից | 6) Մեծ ստրուկների |
| 3) Իսիկ Կուլ | 7) Մեոյալ |
| 4) Վեներն | 8) Մեծ արջի |

57

Գրել այն երկրների համարները, որոնք էլք ունեն դեպի ծով.

- | | |
|------------|-------------|
| 1) Չեխիա | 5) Լիբանան |
| 2) Եգիպտոս | 6) Պարագվայ |
| 3) Չադ | 7) Մեքսիկա |
| 4) Պերու | 8) Ավստրիա |

58

Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ձկնային տնտեսությունների զարգացվածությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Պերու | 5) Բոլիվիա |
| 2) Չինաստան | 6) Ինդոնեզիա |
| 3) Գերմանիա | 7) Ուկրաինա |
| 4) Հնդկաստան | 8) Լեհաստան |

59

Գրել այն երկրների համարները, որոնք գտնվում են Լատինական Ամերիկայում:

- | | |
|--------------|--------------|
| 1) Էկվադոր | 5) Չիլի |
| 2) Արգենտինա | 6) Կոլումբիա |
| 3) Ճապոնիա | 7) Իտալիա |
| 4) Նիգերիա | 8) Ֆրանսիա |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԵՄ կազմում են.

- | | |
|--------------|-------------|
| 1) Դանիա | 5) Բրազիլիա |
| 2) Հունաստան | 6) Թուրքիա |
| 3) Բուլղարիա | 7) Գերմանիա |
| 4) Ավստրալիա | 8) Իրաք |

61

Գրել այն ջրեկների համարները, որոնք մտնում են Որոտանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Երևանի | 5) Շամբի |
| 2) Քանաքեռի | 6) Այրումի |
| 3) Տաթևի | 7) Սևանի |
| 4) Արգելի | 8) Արգնիի |

62

Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել հյուսիսից հարավ ուղղությամբ:

- 1) Արփա
- 2) Հրազդան
- 3) Ախուրյան

63

ՀՀ տրված լճերի համարները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Սև
- 2) Քարի
- 3) Արփի

(64-65). Աշտարակ քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են -1° , -4° , -6° , -2° , $+7^{\circ}$, $+16^{\circ}$, $+10^{\circ}$, $+4^{\circ}$ ցուցանիշները:

64 Որոշել օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

65 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. $45^{\circ}30'$ և արմ. ե. 80° : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

67

Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը (կմ-ով), եթե դրանցից մեկը հվ. լ. 17° -ի վրա է, իսկ մյուսը՝ հվ. լ. 36° -ի:

68

Երկրի բնակչության թիվը 2,8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 70 մարդ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը:

69

Ֆրանսիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 2) ՀՆԱ-ի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում:
- 3) Տնտեսությունը զարգացման հետինդուստրիալ փուլում է:
- 4) Հարուստ է նավթի պաշարներով:
- 5) Էլեկտրաէներգիայի մեծ մասը բաժին է ընկնում աեկներին:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:

70

ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Մարզի ընդերքում կան մարմարի, բենթոնիտային կավի և ածխի պաշարներ:
- 2) ՀՀ խաղողագործական չորս շրջաններից մեկն է:
- 3) Խոզաբուծությունը թույլ է զարգացած:
- 4) Թեթև արդյունաբերության ենթաճյուղերից առավել զարգացած է տեքստիլը:
- 5) ՀՀ փայտամշակման փայտամշակման խոշորագույն կոմբինատը Իջևանում է:
- 6) ՀՀ-ում ծխախոտի մշակության գլխավոր շրջաններից է: